ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մեր Մասին

Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը հանդիսանում է միասնական ռեսուրս-կենտրոն հայրենադարձների համար՝ աջակցելով նրանց դեպի հայրենիք տեղափոխությանն առնչվող բոլոր հարցերում: Այն ստեղծվել է ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից՝ Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Կենտրոնի նպատակն է խթանել հայրենադարձությունը, աջակցել հայրենադարձների արդյունավետ ինտեգրման գործընթացին և ակտիվ ներգրավմանը Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական կյանքին:

Կենտրոնի ծառայությունները

Յուրաքանչյուր հայրենադարձի հետ, ով մտածում է Հայաստան տեղափոխվելու մասին կամ արդեն իսկ տեղափոխման գործընթացում է, կաշխատի կենտրոնի մեկ աշխատակից, ով **խորհրդատվություն և գործնական աջակցություն** կտրամադրի հետևյալ ուղղություններով՝

- քաղաքացիության և կացության կարգավիճակի ձեռքբերում
- անձնական գույքի տեղափոխություն
- առողջապահական հարցեր
- կրթամշակութային հարցեր
- սոցիալ-տնտեսական հարցեր
- զբաղվածություն և աշխատանքի թույլտվություն
- զինվորական հաշվառում
- իրավական ոլորտի հարցեր
- բիզնեսի հիմնում կամ տեղափոխություն

Կենտրոնն առաջարկում է նաև.

- հայերենի անվճար դասընթացներ
- ոլորտային անվճար սեմինար-դասընթացներ
- տեղեկատվական հանդիպումներ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏՈՒՆԸ ՍՊԱՍՈՒՄ Է ՔԵԶ

Գործընկերներ

Հայրենադարձների լիարժեք ինտեգրումն ապահովելու համար Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը սերտորեն աշխատում է «Repat Armenia» հիմնադրամի մեր գործընկերների հետ՝ օգնելով հայրենադարձներին աշխատանք գտնել Հայաստանում, ինչպես նաև պարբերաբար կազմակերպելով առցանց և անցանց հանդիպումներ, ցանցային միջոցառումներ, աշխատանքի տոնավաճառներ և մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

Այցելեք մեզ

37 Հանրապետության փողոց, Երևան (մուտքը Մելիք-Ադամյան փողոցից)

(+374) 10 515 516

(+374) 77 99 8123

repatriation@gov.am

RepatriationCenter

diaspora.gov.am

repatriation.center



ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Repat Armenia